

146. ՏԵՐՏՐՈՋ ԴԱՍ

Տերտեր մե, վըր ուր արևուն, մըջ վարժատան դաս կիտեր, հմա
ի՛նչ դաս, նստած տեղ՝ կը քներ:

Օր մե՛ աշակերտմ՝ կը հարցուե՛

— Տե՛ր հայր, դասին դու յո՞րի կը քնիս:

Տերտեր կըսե.

— Լա՛ո, չըմ քնի, աչքերսի կը փակիմ, հըտ Քրիստոսին կը
խոսամ:

Կէղնի օր՝ դասի վախտ, աշակերտն աչքեր կը փակե, կը քնի,
տերտերն օր կը տեսնա քներ է, կը բոռա.

— Անի՛ ծյալ, դասի վախտ կը քնի՞ն:

Տղեն կը թոնա քնուց, կըսե.

— Տե՛ր հայր, ես չը քներ ենք, կը խոսենք հըտ Քրիստոսին:

— Հըտ Քրիստոսի՞ն: Քրիստոսն ի՞նչ ըսեց:

— Քրիստոսն ըսեց՝ զձեր տերտրոջ ո՛չ չերեսն իմ տեսի, ո՛չ կը
ձանչընամ:

